Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 34

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Մ. Մաթևոսյանը, Գ. Արշակյանը, Ա. Դատումյանը, Տ. Հակոբյանը, Տ. Գալստյանը, Բ. Հարությունյանը, Ա. Հունանյանը, Ա. Խաչատրյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ պաշտոնակատար Ն. Մուրադյանը, բաժինների պետեր:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին:

/Զեկուցող՝ Շ. Վահանյան/

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու մի շարք որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

6. Աշտարակ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին:

/Զեկուցող՝ Ի. Բարսեղյան/

7. Տեղական վճարի արտոնություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

8. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Բազմաղբյուր, Արտաշավան և Օշական բնակավայրերում փողոցների, նրբանցքների և փակուղիների համարակալման մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

9. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

10. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Անտառուտ, Ուշի և Օհանավան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

11. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ն. Մուրադյան/

16 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը, Ա. Դապումյանը, Ա. Խաչատրյանը և Մ. Մկրտչյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - *Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին>> N 163-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ կետի և <<Նորմատիվ

իրավական ակտերի մասին>> օրենքի 7-րդ, 33-րդ, 34-րդ հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեի 1-6-րդ հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ:

Զեկուցողը, մասնավորապես նշեց, որ համայնքի բյուջեում կատարվել են վերաբաշխումներ՝ հաշվի առնելով 2023 թվականի տարվա վերջում առաջացած ազատ մնացորդը:

Բարձրացված հարցերին Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը, Ա. Դատումյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 3 - Մեկ անձից գնման ընթացակարգով գնում կատարելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գնումների մասին>> օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունները հրաժարվել են պայմանագիր կնքելուց, ինչպես նաև Աշտարակի համայնքապետարանի ենթակայության գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների գործունեությունը վերսկսվել է հունվարի 15-ից, ուստի Աշտարակ համայնքի կարիքների համար սննդամթերքի գնման ընթացակարգը համարել անհետաձգելի պահանջ և թույլատրել ձեռքբերումն իրականացնելու մեկ անձից գնման ընթացակարգով՝ համաձայն հավելվածի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Դատումյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 4 - Ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շանթ Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն>> ՀԿ-ի նախագահի դիմումը, ղեկավարվելով <<Տեղական

ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ կրթամշակութային կենտրոնի շինարարական աշխատանքների /շենքի ծածկի բետոնապատում/ իրականացման համար <<Գոռ Թումանյանի անվան կրթամշակութային կենտրոն>> հասարակական կազմակերպությանը 3 465 000 /երեք միլիոն չորս հարյուր վաթսունհինգ հազար/ ՀՀ դրամի չափով ֆինանսական աջակցություն տրամադրելու /նվիրաբերելու/ վերաբերյալ առաջարկությանը:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Դապումյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 5 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի ավագանու մի շարք որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 162-Ն որոշման հավելված 6-ը շարադրել նոր խմբագրությամբ, ինչպես նաև՝ Աշտարակ համայնքի ավագանու 11.12.2023թ. N 166-Ա որոշման հավելված 20-ը և հավելված 34-ը շարադրել նոր խմբագրությամբ:

Բարձրացված հարցերին Ս. Սահակյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Դապումյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Աշտարակ համայնքում 2024 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացը սկսելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետ Իշխան Բարսեղյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 2-ի N 1890-Ն որոշումը և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, Աշտարակ համայնքում 2024

թվականին սկսել մասնակցային բյուջետավորման գործընթաց: Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են համայնքի տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված ոլորտները (կապիտալ բնույթի):

Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն 16 տարին լրացած համայնքի յուրաքանչյուր բնակիչ՝ ինչպես անձամբ, այնպես էլ հասարակական միավորումների և քաղաքացիական նախաձեռնությունների միջոցով:

Ներկայացված առաջարկ-նախագծերը չեն կարող համընկնել համայնքի 2024 թվականի բյուջեով նախատեսված այլ ծրագրերի հետ:

Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի ընդհանուր բյուջեն ըստ հաշվարկված սահմանաչափի չի կարող գերազանցել՝ 210 000 000 (երկու հարյուր տասը միլիոն) ՀՀ դրամը:

Մասնակցային բյուջետավորմամբ ձևավորված յուրաքանչյուր սուբվենցիոն ծրագրի իրականացման համար համայնքի բյուջեում (ֆոնդային մասում) որպես ֆինանսավորման մասնաբաժին նախատեսել տվյալ ծրագրի համար հայցվող պետական ֆինանսավորման գումարի առնվազն 20 տոկոսը:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Դապումյանը և Ս. Օվոյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 7</u> - Տեղական վճարի արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով, Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների երեխաներին տրամադրել մանկապարտեզի վարձավճարի արտոնություն՝ 2024 թվականի հունվար-օգոստոս ամիսների համար:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - *Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Բազմաղբյուր, Արտաշավան և Օշական բնակավայրերում փողոցների, նրբանցքների և փակուղիների համարակալման մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387-Ն որոշման պահանջներով.

1. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամասում գտնվող փողոցին տալ 9 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, քաղաք Աշտարակ, Արա-1 թաղամաս, 9-րդ փողոց:

2. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամասում գտնվող փողոցին տալ 10 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, քաղաք Աշտարակ, Արա-1 թաղամաս, 10-րդ փողոց:

3. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Արա-1 թաղամասում գտնվող փողոցին տալ 11 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, քաղաք Աշտարակ, Արա-1 թաղամաս, 11-րդ փողոց:

4. Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Սուրբ Սարգսի փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, քաղաք Աշտարակ, Սուրբ Սարգսի փողոց, 1-ին նրբանցք:

5. Աշտարակ համայնքի Բազմաղբյուր բնակավայրի 11-րդ փողոցից սկիզբ առնող նրբանցքին տալ 3 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Բազմաղբյուր բնակավայր, 11-րդ փողոց, 3-րդ նրբանցք:

6. Աշտարակ համայնքի Արտաշավան բնակավայրի Հ. Մանուչարյան փողոցից սկիզբ առնող փակուղուն տալ 1 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Արտաշավան բնակավայր, Հ. Մանուչարյան փողոց, 1-ին փակուղի:

7. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Մ. Մաշտոցի փողոցի 3-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 17 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Մ. Մաշտոցի փողոց, 3-րդ նրբանցք, 17-րդ փակուղի:

8. Աշտարակ համայնքի Օշական բնակավայրի Վ. Ամատունու փողոցի 4-րդ նրբանցքից սկիզբ առնող փակուղուն տալ 12 համարը և հասցեն համարել՝

- Աշտարակ համայնք, Օշական բնակավայր, Վ. Ամատունու փողոց, 4-րդ նրբանցք, 12-րդ փակուղի:

9. Աշտարակ քաղաքի, Բազմաղբյուր, Արտաշավան և Օշական բնակավայրերի քարտեզներում կատարել համապատասխան լրացումներ և ներկայացնել ՀՀ կադաստրի պետական կոմիտեի համապատասխան ստորաբաժանում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Արթուր Նահապետյանի 22.12.2023թ. N 13976, Խորեն Ջամկերտյանի 28.12.2023թ. N 14201, Արթուր Ավագյանի 08.01.2024թ. N 119, <<ՁՈՐ>> ՓԲԸ-ի տնօրեն Իզաբելա Խաչատրյանի 22.12.2023թ. N 13975 և Հայկ Պետրոսյանի 15.01.2024թ. N 362 դիմումները, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N 550-Ն որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի վարչական տարածքում գտնվող, 02-001-0644-0029 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 0,0494հա գյուղատնտեսական նշանակության հողամասը /այլ հողատեսք/ ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից՝ ընդլայնվող 02-001-0644-0002 ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի ընդհանուր հանատեղ սեփականատերեր Էդգար Ալբերտի Ֆրանգուլյանին և Խորեն Սերոբի Ջամկերտյանին:

Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Միկոյան եղբայրների փողոց, N 154/1 հասցեում գտնվող, 02-001-0129-0018 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 331քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից, Միկոյան եղբայրների փողոց, N 154 հասցեում գտնվող, ընդլայնվող 02-001-0129-0001 ծածկագրով

բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Արթուր Հենրիկի Նահապետյանին:

Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Մուղնի, 1-ին թաղամաս, N 216/1 հասցեում գտնվող, 02-001-0736-0023 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 302,5քմ հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից ընդլայնվող 02-001-0364-0071 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Արթուր Ռաֆիկի Ավագյանին:

Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի Քասաղի կիրճ տեղամաս N 8/2 հասցեում գտնվող, 02-001-0857-0011 ծածկագրով, համայնքային սեփականություն հանդիսացող 1,18143հա հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից, Աշտարակ քաղաքի Քասախի կիրճ, N 1 հասցեում գտնվող, ընդլայնվող 02-001-0857-0003 ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի սեփականատեր <<ՁՈՐ>> ՓԲԸ - ին:

Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքի 02-001-0063-0028 ծածկագրից, համայնքային սեփականություն հանդիսացող 248քմ բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասը ուղղակի վաճառքով /կադաստրային արժեքով/ օտարել կից ընդլայնվող 02-001-0063-0113 ծածկագրով բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասի սեփականատեր Հայկ Ռուբիկի Պետրոսյանին:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

<u>Լ Ս Ե Ց Ի Ն – 10</u> - ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Աշտարակ քաղաքում, Անտառուտ, Ուշի և Օհանավան բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի

մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 08.05.2023թ. N 2/փ-117 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, քաղաքացիների և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները:

Նշված փոփոխությունները սահմանված կարգով արտացոլել համայնքի հողերի հաշվառման տարեկան հաշվեկշռում և Աշտարակ համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզներում:

18 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ս. Օվոյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն – 11 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Ն. Մուրադյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

17 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Ա. Մարկոսյանը, Ս. Օվոյանը և Գ. Հովհաննիսյանը չեն մասնակցել քվեարկությանը:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2024 թվականի հունվարի 17-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ	_____
ՄԵՐԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ	_____
ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ	_____
ԱԼԲԵՐՏ ԴԱՏՈՒՄՅԱՆ	_____
ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ	_____
ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ	_____
ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ	_____
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	_____
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	_____
ՆԱԶԵԼԻ ԱՐՍԵՆՅԱՆ	_____
ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ	_____
ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ	_____
ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ	_____
ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ	_____
ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ	_____
ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ	_____
ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ	_____
ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ	_____
ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	_____

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՂ՝ **Շ. Վ Ա Հ Ա Ն Յ Ա Ն**

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ